3. ԾԱՆՐ ՀԱՐԿԵՐ

Թարվիզ քաղքին մեջը կապրեին թագավորն ու իրա լալա-վազիրները։ Մի քանի վախտ անցնելեն ետև թագավորը սինոդի վախտ լալա-վազիրներին կըսե.— Լալա-վազիր, ախբր մենք ըսման թախտը նստելով քաղքի դրութենը չենք իմանա։

— Բը ի՞նչ էնենք։

— Ի՞նչ էնենք, ելլենք դարվեշի ղըլըղը հագնինք, ընկնինք դեղերը, էս կողմ, էն կողմ ման գանք, իմանանք մեր աշխըրի դրութենը։

Դարվեշ դառցան, հեծան ձիերը, ընկան գեղերը։

Է՛ս դեղեն էն գեղը, էս քաղքեն էն քաղաքը ման էկան, օրվան մեկը ցորեկվա շոքին հասան մե բաղի։ Իրանք է շատ ծառավ էին։ Գանչին բաղպանճուն, ջուր ուզեցին։ Բաղպանճին գնաց ջրի տեղը էրկու հատ նուռ բերեց, մեկը կիսեց, ջուրը քամեց, տվավ էրկուսը խմեցին, մե նռի ջուրը չկրցան խմեն։

Մեկել նուռը տարան, գնացին։ Եփ օր բաղպանճու քովեն հեռեցան, թագավորը վազիրին ըսավ.— Դու տեսա՞ր ինչ էղավ։ Մե նռի ջուրը էրկուսըս չկրցանք խմենք։ Բը էդ բաղեն ինչքա՞ն օքուտ կը քաշե բաղպանճին։

— Ի՞նչ էնենք, աշխատել է, ունի։

Թագավորն ըսավ.— Ես մինչի հիմի հարկեր չեմ դրե ըդոնց վրեն։

Գնաց պալատը, հարկերն ավելցրավ, երկիրը քցեց նեղ դրությյան մեջ։ Անցավ մե էրկու-իրեք տարի. թագավորը նորեն ելավ, ընկավ գեղերն ու քաղաքները, վերջը էկավ բաղի քովը, նորեն ջուր ուզեց։ Բաղպանճին գնաց շատ շարչրրվավ, չկրցավ նուռ գտներ, օր բերեր ջուր խմցներ։ Դառցավ էկավ գարվեշների քովը, բերավ մի հին նուռ, օր չորցել էր. քամե՞ց, քամե՞ց, բան դուս չէկավ։ Թագավորը հարցրավ.— Այ մարթ, էրկու իրեք տարի առաջ էկա էս բաղը, ջուր ուզեցի. դու բերեցիր մե նռով էրկու հոգի կշտացուցիր։ Հիմի սաղ բաղեն մեզի ընչի՞ չը կրցար ջուր խմցներ։

— Է՞յ,— ըսավ,— դարվեշ բաբա, քու հերրդ օրհնըվի, մեր թագավորը էման բանըմ չէրավ, օր բաղը բաղպանճին տիրեր, խնամեր, օր շատ բան էղնիր։

— Ի՞նչ էրավ թագավորը,— հարցուց դարվեշը։

— Ի՞նչ պըտի էներ, հարկերը էնքան դրեց, օր չկրցանք տկեն դուս գայինք, բաղին էլ չաշխատանք, գնաց, չ ուղավ։

Նորեն թագավորը գնաց թախտը, հարկերը բաշխեց, երկիրը խաղաղացավ, հարստացավ։